ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑՈՒ ՁԵՌԱԳՐԵՐԻՑ

Անիի Մայր տաճարի երեց Սամվել Անեցին իր «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ» վերնագրով Ժամանակագրությունը գրել է Կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու (կթղ. 1113-1166 թթ.) պատվերով, դեպքերի շարադրանքը հասցնելով մինչև 1163 թ.[1]:

Սամվել Անեցու Ժամանակագրությունը մեզ է հասել բազմաթիվ ընդօրինակություններով՝ որոնց մեծ մասն ընդգրկված է Ժողովածուների մեջ: Ժամանակագրության 35 ձեռագիր պահվում է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում, 13 ձեռագիր՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի Սրբոց Հակոբյանց վանքում, նույնքան էլ Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում, 4 ձեռագիր՝ Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում, և 5 մատյան՝ այլ հավաքածուներում (ընդամենը՝ 70 ընդօրինակություն):

Ժամանակագրության ձեռագրերը, հեղինակային բնագրից բացի, պարունակում են հետագայի գրիչների և տարբեր անձանց կատարած բազմաթիվ ընդմիջարկություններ ու հավելումներ: Արշակ Տեր-Միքելյանը 1893 թ. Վաղարշապատում ձեռքի տակ ունենալով 14 ձեռագիր (մեծագույն մասը՝ 17-րդ դ.)՝ Անեցու երկը հրատարակել է դրանցում եղած հավելումներով[2]: Մատենադարանում պահվող Ժամանակագրության ընդօրինակությունների մի մասը պարունակում են ցայժմ չհրապարակված տեղեկություններ ու ժամանակագրական միավորներ: Մենք անդրադարձել ենք առավել ծավալուն հավելումներ ունեցող ձեռագրերին[3]: Ստորև կներկայացնենք ևս մի քանի ձեռագրեր և դրանցում եղած հավելումները, որոնք պատմական որոշ հետաքրքրություն են ներկայացնում և հրապարակվում են առաջին անգամ:

Մատենադարան ձեռ. թիվ 3965, գրվել է Կամենեցում 1624 թ. Ներսես Կամենեցու ձեռքով: Ժամանակագրության բնագիրն ընդօրինակվել է Մխիթար Անեցու 1177-ին

---

[1] **Կ. Մաթևոսյան,** Սամվել Անեցու Ժամանակագրության հնագույն ձեռագրերը, ակադեմիկոս Ն. Մառի ծննդյան 140 և մահվան 70-ամյակների տարելիցի ժողովածու, Երևան, 2005, էջ 37-48:

[2] Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893 (այսուհետև՝ Անեցի):

[3] **Կ. Մաթևոսյան**, Հավուց թառի վանքի և Ապիրատյան տոհմի պատմության նորահայտ տվյալներ, «Բանբեր Մատենադարանի», 17, Երևան, 2006, էջ 147-167, նույնի, Ժամանակագրական նոր միավորներ Մատենադարանի երկու ձեռագրից, «Հանդէս ամսօրեայ», 2007, էջ 257-276:

Հռոմոսում կատարած ընդօրինակությունից (Մատենադարան ձեռ. թիվ 3613)[4]:

Ձեռագիրը գրված է թղթի վրա, նոտրգրով (թերթ՝ 116, 19x16 սմ): Ժամանակագրությունը զբաղեցնում է 13ա-86բ էջերը, սակայն վերջին վկայությունը 82բ էջում է և ավարտվում է 1735 թվականի հիշատակությամբ: Հաջորդ մի քանի թերթերին 18-րդ դարում գծված սոսկ տարեթվերով այունակներ են, որոնք հասնում են մինչեւ Փրկչական ՍԻ (2020) և Հայոց ՌՆԿԹ (2020) թվականը (էջ 86բ):

18-րդ դարի սկզբին ձեռագիրը պատկանել է Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Եփրեմ Ղափանցուն, որին վերաբերող տեղեկություններ են մուծվել Ժամանակագրության վերջին հատվածում: Ժամանակագրության հեղինակային մասին և ուշ շրջանում կատարված հավելումներին հաջորդում են 17-18-րդ դդ. վերաբերող հետևյալ տեղեկությունները:

«Թուին ՌՃԻԳ (1674) **Նախճուանայ Սուրբ Կարապետու** վանաց առաջնորդ **Եսայի** աստուածաբան վարդապետն ի Ձ[5](80) ամեայ գոլով առ Աստուած փոխեցաւ եւ թաղեցաւ ի **Սուրբ Էջմիածինն**, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի» (էջ 81բ, մեջբերումներում ընդգծումները մերն են - Կ. Մ.):

Դավիթ Բաղիշեցին Եսայուն հիշատակում է որպես Փիլիպոս Աղբակեցուն (1633-1655) ժամանակակից նշանավոր վարդապետներից մեկը[6]: 1653-55 թթ. նա հիմնովին նորոգել է Երնջակի Ս. Կարապետի վանքը[7], մասնակցել 1665 թ. եկեղեցական ժողովին[8]:

«Թուին ՌՃԺԲ (1663) **Ձեյթունայ** առաջնորդ կատարեալ երաժիշտ **Գրիգոր** աստուածաբան վարդապետն հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս, յիւրում մենաստանի, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի» (էջ 81բ): Գրիգոր Ձեյթունցին հիշվում է նաև 1633-ին, 1655 թ. Մաշտոց է ընդօրինակել[9]:

Ուշագրավ է, որ ձեռագրի հետագայի ստացող Եփրեմ Ղափանցին ժամանակին աշակերտել է Եսայի և Գրիգոր վարդապետներին[10], և դրանով պետք է բացատրել վերջիններիս մասին տեղեկությունների ներմուծումն այստեղ:

Նախորդ և հաջորդ հավելումներից տարբերվող մանրատառ գրով պահպանվել է ձեռագրի ստացողի հայտնած հետևյալ ուշագրավ տեղեկությունը. «Թուին ՌՃԾ-ն (1701) եւ օգոստոսի ԻԳ-ն (23) յաւուր շաբաթու զկնի յերեկոյեան ժամուն ի մէջ այս **Էտէրնէու** հրկիզութիւն եղեւ նախ եւ առաջ բերդէն ի դուրսն այրուեցաւ եւ ապա թէ

---

[4] **Մաթևոսյան Կ.**, Սամվել Անեցու Ժամանակագրության Մխիթար Անեցու ընդօրինակությունը, «Էջմիածին», 2006, Ժ-ԺԱ, էջ 88-100:

[5] Տառը եղծված է:

[6] Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., հ. 2, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 359:

[7] Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., հ. 1, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 400-401:

[8] **Ա. Այվազյան**, Հայոց Եկեղեցին 18-րդ դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Երևան, 2003, էջ 199, 205, 232:

[9] Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 519, Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Գ, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1984, էջ 685-686:

[10] **Ա. Այվազյան**, նշվ. աշխ., էջ 232:

հուրն մտաւ ի մէջ բերդին եւ մինչեւ ի ԺԴ (14) ժամն վառեցաւ ըզ Ա (1) Լատինացոց եւ Ա (1) Հայոց եւ ԺԵ (15) սինովայ Հրէից եւ Է (7) ջամի Տաճկաց, թէ ի դուրսն եւ թէ ի մէջ բերդին եւ Ռ եւ ԵՃ (1500) տուն, ասացին թէ այրեցաւ, թէ էքմէքչու փուռն եւ թէ ջաղաց, թէ տներ եւ թէ մեխանայք եւ թէ ամենայն արհեստաւորաց խանութներ:

Իսկ յետ այսորիկ եւ ես **Էտրէնու** առաջնորդ ծերունի **Եփրէմ** վարդապետս այլուի ՌՃԾ (1701) թուին յիշեցի զԱստուած եւ կանգնեալ կրկին անգամ շինել ետու մէր Հայոց եկեղեցին քան ըզառաջինն այլ պատուական եւ ի դեկտեմբերի ԻԳ-ի (23) ի տօնի Դաւթայ մարգարէին օծեցի զեկեղեցին եւ եդի յանունն **Սուրբ Աստուածածին**» (էջ 82ա):

Էտրինե - Ադրիանապոլսի 1701 թ. հրդեհի մասին սույն վկայությունը քաղաքի վերաբերյալ ուշագրավ մանրամասներ է պարունակում:

Մինչ այդ երկու անգամ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքի Աթոռը զբաղեցրած Եփրեմ Ղափանցին Ադրիանապոլսի առաջնորդ է նշանակվել 1699-ին[11]: 1701 թ. սեպտեմբերի 1-ին նա կրկին պատրիարք է ընտրվում, սակայն շարունակում է մնալ Ադրիանապոլսում[12]: Ինչպես վերը տեսանք, նա այդ տարվա վերջին ավարտում է իր հիմնած Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումը:

1702 թ. մարտի 7-ին Եփրեմ Ղափանցին աթոռանկ է արվում և հեռացվում երկրից ուղարկվելով Էջմիածին[13]: Իր հետ ունենալով սույն ձեռագիրը, նա ժամանակագրության մեջ արձանագրել է Էջմիածին հասնելու օրը.

«Ի ՌՃԾԱ (1702) թուին Հայոց ես **Եփրէմ** վարդապետս ելի ի **յԷտրէնու** եւ եկեալ մտի ի **Սուրբ Էջմիածինս** յամսեանն օգոստոսի Ա (1), յաւուր շաբաթու» (էջ 82ա):

Հաջորդ վկայությունները վերաբերում են 1730-ականների դեպքերին:

«Թվին ՌՃՁ (1731) **Շահն** եկաւ **Երեւան**, ի դառնալն եկաւ չալտրան զօրք, եկան **Թաթէ Առաքելոյ** վանից ոչխարն, դաւարն, թէ արծաթէղեն, թէ ոսկէղեն, թէ խաչ, թէ զգեստ ամէն կողոպտեցին, առին, կորան» (էջ 82բ):

«Թվին ՌՃՁԱ-ին (1732) հաշտութիւն ար(արին) օսմանցին եւ կարմրագթակն, որ մականուամբ ղզլպաշ կոչին» (էջ 82բ):

«Թուին ՌՃՁԴ (1735) Պարսից զօրավարն ասպատակեաց երկիրն **Բագրեւանդայ** եկեալ հինառուքն հասին վանքն **Սրբոյն Գրիգորի**, իսպառ բնաջինջ արարին միաբանք ուխտին, անդ էր առաջնորդ մեծի **Առաքելոյն Թադէոսի Յոհաննէս** աստուածաբան վարդապետն, որ նահատակեցաւ Ժ (10) միաբանօվ, որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի եւ աղօթիւք նոցին Տէր մեզ ողորմեսցի» (էջ 82բ):

Մատենադարան, ձեռ. թիվ 6354 Ժողովածուն 17-րդ դարի մատյան է՝ գրված թղթի վրա (թերթ՝ 327, 25x18 սմ): Գրիչներն են Հովհաննես և Դավիթ վարդապետները: Սամվել Անեցու Ժամանակագրությունը զբաղեցնում է 267ա-325բ էջերը, առաջին մասը՝ մինչև աղյուսակները, գրված է բոլորգրով, իսկ երկրորդ մասը (286ա էջից)՝

[11] **Մ. Օրմանյան**, Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 3080, 3089, 3109, 3122:

[12] Նույն տեղում, էջ 3129:

[13] Նույն տեղում, էջ 3135:

նոտրգրով: Աղյուսակներում Փրկչական և Հայոց թվականները գրված են կարմիրով: Ունի բազմաթիվ հավելումներ, որոնք

առկա են նաև Մատենադարանի թիվ 7261 և 10202 ձեռագրերում: Վերջին վկայությունը վերաբերում է Հայոց ՌՃԼԶ (1687) թվականին (էջ 325ա), թեև աղյուսակը գծված է նաև հաջորդ էջում (վերջանում է 1735 թվականով):

Ձեռագիրն ունի նաեւ մի քանի այլ հավելումներ:

990-ական թվականների հատվածում. «Ի սկսանել թագաւորութեան թուրքաց Ծ (50) այր հայ ազգաւ, նեղեալք ի նոցունց, ելին յանապատ սպառազինեալք, եկին ի **Մարաշ**, գտին այր մի քաջ, **Փիլարտոս**, հայ ազգաւ եւ նովաւ առին **ըզԿիլիկիայ**»[14] (էջ 308բ):

Փրկչական ՌԱ (1001), Հայոց ՆԽԸ (999) թ. «Աստանօր առնու կատարումն **Ստեփանոսի Տարօնացւոյ** պատմագրութեան: Զկնի նորա սկսանի **Արիստակէս Լաստիվերցի** զաղէտս, որ ի թուրքաց եւ ի թոնտրակցւոց»[15] (էջ 308բ):

Փրկչական ՌՃՂԳ (1193), Հայոց ՈԽ (1191) թ. «**Զաքարէ** եւ **Իւանէ** յառաջեցին եւ տիրեցին բազում աշխարհաց» (էջ 316ա):

Փրկչական ՌՃՂԹ (1199), Հայոց ՈԽԶ (1197) թ. «Թագաւորեաց **Լեւոն**, որդի **Ստէֆանէի**, որդոյ **Լեւոնի Ռուբենանց** յազգէ **Արշակունեաց**» (էջ 316ա): Տարբեր աղբյուրներում Ռուբեն Ա-ի ծագումն ավելի հաճախ կապվել է Բագրատունիների և Արծրունիների տոհմերի հետ[16]: Անեցու Ժամանակագրության հրատարակության մեջ Ռուբենի մասին հավելումները բավականին մեծ թիվ են կազմում, այն դեպքում, երբ հեղինակային բնագրում դրանք իսպառ բացակայում են[17]:

Փրկչական ՌՄԼԴ (1234), Հայոց ՈՁԱ (1232) թվականի հատվածում. «Սկիզբն թագաւորութեանց օսմանացոց, **Օսմանն** շինական գոլով յարեցաւ **յԱլատին** սուլթանն **Միջագետաց** եւ առեալ **զԲուրսայ** եւ թագաւորեաց ամս ԾԸ (58), որոյ անուամբն օսմանլու կոչեցան»[18] (էջ 317ա):

Փրկչական ՌՅԽԶ (1346), Հայոց ՉՂԳ (1344) թ. «**Յոհան** վարդապետն **Քոնեցի** արար միաբանութիւն ընդ Ֆռանկաց միջնորդութեամբ **Բարդուլիմոսի** եպիսկոպոսին **Մարաղոյ**» (էջ 319ա):

Փրկչական ՌՅԿԹ (1369), Հայոց ՊԺԶ (1367) թ. «Մեռաւ **Կոստանդին** եւ թագաւորէ միւս **Կոստանդին** յայլմէ ազգէ, որ յայժմ ունի զթագաւորութիւնն» (էջ 319ա): Խոսքը

---

[14] Տեղեկությունը ժամանակագրական առումով իր տեղում չէ, քանի որ Փիլարտոս Վարաժնունու իշխանությունը ստեղծվեց 1071 թ. Մանազկերտի ճակատամարտից հետո: Վկայությունը քաղված է Միքայել Ասորուց (Տեառն Միխայէլի պատրիարգի Ասորւոց ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1870, էջ 406), որից օգտվել է նաև Կիրակոս Գանձակեցին (Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 83):

[15] Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի Պատմությունը հասնում է մինչև 1004 թ., իսկ Արիստակես Լաստիվերցու պատմությունը սկսվում է 1000 թվականից:

[16] **Է. Բաղդասարյան**, Կիլիկիայում Ռուբինյան հարստության հիմնադիր Ռուբեն Ա իշխանը և իր գործը, «Էջմիածին», 2006, Զ, էջ 87:

[17] **Լ. Տեր-Պետրոսյան**, Խաչակիրները և հայերը, հ. Բ, Երևան, 2007, էջ 65-66, 70:

[18] Հմմտ. Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 348:

Կիլիկիայի Հայոց Կոստանդին Դ (1344-1362) և Կոստանդին Ե (1365-1373) թագաւորների մասին է[19]: Այս տեղեկությունը հետաքրքիր է նրանով, որ պարզում է հավելումների մի մասի հեղինակի ապրած ժամանակը («…որ յայժմ ունի զթագաւորութիւնն…»): Դժվար է ասել, թե հավելումների որ մասն է պատկանում այդ անանուն հեղինակին, որը լրացումներն արել է մինչև Կոստանդին Ե-ի մահը (1373 թ.):

Փրկչական ՌՅՂԴ (1394), Հայոց ՊԽԱ (1392) թ. «Կատարեցաւ սուրբ վկայն **Աւագ** ի **Բաղէշ**»[20] (էջ 319բ):

Ժամանակագրական թվաշարքի 1386-1399 թթ. հատվածում, աջ սյունակում սկսվում, ապա ձախում շարունակվում, և կրկին աջում ավարտվում է մի բավականին մեծ հատված, որի աղբյուրը՝ Թովմա Մեծոփեցու Պատմությունը, նշում է հենց ընդմիջարկություն կատարողը: Առաջին հատվածը վերաբերում է մի քանի հայ իշխանների բռնի մահմեդականացմանը, իսկ երկրորդը՝ Սուլթանիայից քրիստոնեության վերացմանը: Դրանք Մեծոփեցու գրածի վերաշարադրանքն են, բայց որոշ տարբերություններ ունեն: Նախ ծանոթանանք ձեռագրում կատարված հավելմանը:

«Լանկ **Թամուրն** ելեալ ի **Սամրղանտայ** եւ գնաց աւերելով զաշխարհս մինչեւ ի ծովն ովկիանոս ամս ԺԷ (17), զոր արարեալ է **Թովմայ Մեծոփեցի** վարդապետն զպատմութիւն եւ զաւերումն աշխարհի, որոց ազգի անունն ջաղաթայ կոչի:

Որդի **Թամուրին Երանշահ**, որ նստաւ ի **Թաւրէզ** եւ որդի նորա **Օմար** յաջորդեաց զտեղի նորա եւ բռնութեամբ դարձոյց **զԲուրթէլ** ի հաւատոց, որդի **Իւանէի Օրբելեանց**, տէրն **Որոտանա**, եւ **զՏարսայիճ**, տէրն **Եղեգեաց** եւ **զՍօղրտմիշ**, տէրն **Մոկաց**, եւ **զՂիտան**, տէրն **Անբերթի յԱրարատէ**, որք բազումք յետոյ զղջացան եւ ի հաւատն Քրիստոսի հաստատեցան:

Միւս որդի **Թամուրին Շահռուհ**, որ թագաւորեցաւ ի **Հրէ** քաղաք եւ որդի նորա **Ուլուբէկ**, որ նստաւ ի **Սամրղանդ**, որոյ աւուրս դաշայ ասորոյ բարձաւ քրիստոնէութիւն ի **Սուլթանիոյ**» (էջ 319բ):

Սուլթանիայի դեպքերի մասին մանրամասն պատմում է Մեծոփեցին[21]: Իսկ իշխանների բռնի կրոնափոխության և դարձի մասին նա գրում է երկու տեղ, նախ ընդարձակ, ապա համառոտ[22]: Հայ իշխանների նկատմամբ գործադրված բռնությունը տեղի է ունեցել 1405-1406 թթ., քանի որ դրանից հետո Լենկ Թեմուրի որդիները Կարա Յուսուֆի ճնշմամբ կորցրեցին իրենց իշխանությունը: Մեծոփեցու և այս ձեռագրի վկայությունների մեջ հետաքրքրական է հատկապես իշխանների մասին ասվածը: Մեծոփեցին նախ պատմում է Թեմուրի որդի Միրանշահի և սրա որդի Օմարի (Միրզա-Օմար) մասին, որի իշխանության առաջին տարում կրոնափոխ են արվել երեք հայ

---

[19] Այս ժամանակաշրջանի մասին հանգամանորեն տե՛ս **Լ. Տեր-Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 409-437:

[20] Ավագ Սալմաստեցու վկայաբանությունը շարադրած Գրիգոր Խլաթեցին Բաղեշում նրա նահատակությունը նշում է 1390 թվականին: **Ա. Մաթևոսյան, Ս. Մարաբյան**, Գրիգոր Ծերենց Խլաթեցի, Երևան, 2000, էջ 101, 155-159:

[21] **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 34-36:

[22] Նույն տեղում, էջ 108-109, 119-120:

իշխաններ («Գ (3) իշխան յազգէս մեր»)[23]: Դրանք են Իվանեի որդի Բուրթելը (Բուրթել մեծի թոռը, որ հիշվում է 1403-1407 թթ)[24], «յազգէ Օրբէլեանց, զտէրն Որոտան», սրա եղբայր Սմբատը, որոնք տարվել են Սամարղանդ, և Գորգունի որդի Տարսայիճը (հիշվում է 1403-1419 թթ)[25], «զտէրն Եղեգեաց»[26]: Ապա առանց անունը տալու նշում է Մակվի երկաբնակ հայ իշխանին՝ «զտէրն Մակուայ» եւ «ազատորդի» Աղիդանին՝ «ի գեղջէն Աղցուց»[27]: Նույն դեպքը նշում է նաև համառոտ. «Եւ մարդիկ, որ յաւուրս չաղաթային ի հաւատոց ուրացեալք էին՝ եկին ի հաւատք. Բուրթէլն՝ Որոտան, Տարսայիճն՝ Եղեգեաց, Սօրղաթմիշն՝ Մակուայն, Աղիդանն՝ Աղցուց»[28]:

Ինչպես տեսնում ենք, մեր ձեռագրի գրիչը օգտվել է երկու վկայություններից, սակայն զանց է առել Սմբատ Օրբելյանի անունը և մի քանի այլ մանրամասներ: Նա «տէրն Մակուայ»-ը սխալմամբ գրել է «տէրն Մոկաց»: Բայց առավել հետաքրքրականը Աղիդանի մասին տեղեկությունն է, որի անունը գրում է Ղիդան, ինչպես որ Մեծոփեցու ձեռագրերի մեծ մասում է[29]: Ընդունված կարծիքի համաձայն, Ամբերդը գոյատևել է «մինչև Լենկթեմուրի աշխարհավեր արշավանքները», որից հետո կործանվել է և դադարել «որպես ամրոց գոյություն ունենալուց»[30]:

Աղիդանի մասին Մեծոփեցու տեղեկությունը՝ «...եւ ազատորդի մի Աղիդան անուն՝ ի յԱրարատեան գաւառէ, ի գեղջէն Աղցից»[31], մեր ձեռագրի գրիչը լրացրել է «**տէրն Անբերթի յԱրարատէ**» ուշագրավ ձևակերպմամբ: Այստեղ տեղանվան շփոթության մասին խոսք լինել չի կարող, քանի որ Մեծոփեցին գրում է, որ ազատորդին ծագումով Աղցք գյուղից էր, իսկ հավելում կատարողը նշում է, որ նա Ամբերդի տերն էր: Այն, որ Ամբերդն այս շրջանում կործանված չի եղել, երևում է նաև այլ փաստերից: 1460 թվականին հիշատակվում է «վարդապետն Ստեփաննոս յԱրարադեան գաւառէ, **ի յականաւոր եւ յանմատոյց դղղեկէն Անբերդւոյ...**»[32], իսկ 1469 թ. Բյուրականում գրված ձեռագրում հիշվում է. «զԱնբերդոյ ժողովուրդն առհասարակ»[33]: Այս խորքի վրա 1406-ին ազատորդի Աղիդանի հիշատակությունը, որպես «տէրն Անբերթի», միանգամայն համոզիչ իրողություն պետք է համարել: Ըստ այդմ, Անեցու Ժամանակագրության ձեռագրում կատարված հավելումը Ամբերդի պատմության մի ու-

---

[23] Նույն տեղում, էջ 108:

[24] **Լ. Խաչիկյան**, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, «Բանբեր Մատենադարանի», 9, Երևան, 1969, էջ 180, 188:

[25] Նույն տեղում, էջ 182, 188:

[26] **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրություն, էջ 108-109:

[27] Նույն տեղում, էջ 109:

[28] Նույն տեղում, էջ 119-120:

[29] Նույն տեղում, էջ 120:

[30] **Ս. Հարությունյան**, Անբերդ, Երևան, 1978, էջ 30:

[31] **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրություն, էջ 109:

[32] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմող՝ Լ. Խաչիկյան), մասն Գ, Երևան, 1967, էջ 436:

[33] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմող՝ Լ. Խաչիկյան), մասն Բ, Երևան, 1958, էջ 290:

շագրավ մանրամասն է բացահայտում:

Մատենադարան, ձեռ. թիվ 5889: Ձեռագրի գրչության հիմնական տվյալներն անհայտ են, ենթադրաբար՝ 17-րդ դարի մատյան է, գրված է թղթի վրա, նոտրգրով (թերթ՝ 84, 19x12,5 սմ)[34]: Ժամանակագրությունը զբաղեցնում է 17բ-61բ էջերը: Ձեռագրի բուն գրչի գրածն ավարտվում է 59բ էջում, սակայն մինչ այդ և դրանից հետո այլ ձեռագրով կատարված են մի քանի հավելումներ:

Փրկչական ՋԺԸ (918), Հայոց ՅԿԵ (916) թվականի դիմաց. «**Գագիկ** նոր թագաւոր, որ **Արծրունեաց**, շինեաց **Աղթամար** սուրբ յեկեղեցին **Սուրբ Խաչին** եւ իշխէր **Գագիկ** միայն **Վասպուրականի**»[35] (էջ 47ա):

«Ի թվին ՈՀԴ (1225) փայլէր իմաստութեամբ սուրբ վարդապետն **Վանական** ի վերին կողմանս **Աղվանիցն**. սայ աշակերտ մեծին **Մխիթարայ**, որ վաղճանեցաւ»[36] (էջ 57բ):

«Ի թուին ՉԺԲ (1263) ամին փոխի մահուամբ ի Քրիստոս **Յոհանէս Գառնեցին**, յայսմ ամի փայլէր իմաստութեամբ սուրբ **Ստեփանոս** վարդապետն, որդի **Յուսկայ** քահանայի ի կողմունս **Բերկրու** եւ **Վասպուրականի**»[37] (էջ 58ա): Հովհաննես Գառնեցու մահվան թվականն այլ աղբյուրներից հայտնի չէ[38]:

ՌՅԻԴ (1324), Հայոց ՉՀԲ (1323) թվականի հատվածում. «Յայսմ ժամանակի փայլէր իմաստութեամբ **Մխիթար** վարդապետն ի **Մեծոփայ վանս**, հանդերձ աշակերտօք» (էջ 59ա): Խոսքը Մխիթար Սասնեցի բաբունապետի մասին է:

Հաջորդ՝ 60ա-60բ էջերին միայն հավելումների հեղինակի գրառումներն են:

ՌՅՁԶ (1386) և Հայոց ՊԼԳ (1384) թվականի դիմաց ունի հետևյալը. «Ելանել **Լանկ Թամուրին** եւ տիրել ամենայն յերկրին Պարսից եւ գալն յերկիրն Հայոց եւ ըմբռնեալ **զԻլդրամ Պայազիտն** եւ երկաթի կաֆասօվ տանելն եւ գնալն ի վերայ **Վանայ** եւ անթիւ մարդիք բերդէն ի վայր ձգելն եւ այլ ամենայն չարիս, զոր գործեաց չարն եւ գնացեալ ի **Սամրղանդ**» (էջ 60ա): Այս տեղեկությունը որոշ տարբերություններով տեղ է գտել նաև այլ մանր ժամանակագրություններում, սակայն Հայոց ՊԼԶ (1387) թվականի դիմաց[39]:

ՌՆԴ (1404), Հայոց ՊԾԱ (1402) «Վաղճանի **Սարգիս** վարդապետն **Սորբեցին**»[40] (էջ

---

[34] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան, Երևան, 1970, էջ 204:

[35] Գագիկ Արծրունին թագավոր է դարձել 908 թ.:

[36] Վանական վարդապետը (1181-1251) Մխիթար Գոշի աշակերտն էր:

[37] Ստեփանոս Հուսկանորդին (Տերհուսկանորդի) մահացել է 1251 թ.: Նրա գործունեության մասին տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Երեք երևելի վարդապետ, «Գարուն», 1991, էջ 82:

[38] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց՝ Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 260, Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, էջ 582-583:

[39] Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 167, հ. 2, էջ 265, 351, 392:

[40] Սարգիս Սորբեցու կամ Ապրակունեցու մահվան վերաբերյալ գրականության մեջ նշվում են 1401 կամ 1404 թվականները: **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրություն, էջ 74, **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 440-441, **Ա. Մաթևոսյան**, Մեծոփավանքի գրչության

60ա):

ՌՆԹ (1409), Հայոց ՊԾԶ (1407) «Սատակումն **Լանկ Թամուրին** եւ իբր շուն գոչելն ի մաղադ եւ ապա ջուր անցուցանելն զի գարշելի ձայն ոչ դադարէր»[41] (էջ 60ա):

ՌՆԺԲ (1412), Հայոց ՊԾԹ (1410) «Շինումն **Մեծոփայ վանիցն** եւ օծումն ձեռամբ **Տաթեւացու**»[42] (էջ 60ա):

ՌՆԺԸ (1418), Հայոց ՊԿԴ (1416) «**Գրիգոր Խլաթեցին Ծերենց** կոչեցեալ կատարի մարտիրոսական մահուամբ ի **Ցիպնայ վանսն**»[43] (էջ 60ա):

ՌՆԼԳ (1433), Հայոց ՊՁ (1431) «Զօրք անողոք չաղաթային եկեալ յերկիրն **Արճշու** եւ **Արծկու** ի վերայ **Սքանդարին** եւ նայ փախուցեալ եւ զօրացն չաղաթին գերեալ զերկիրն **Արճշու** եւ **Վանայ** բազմում եւ անթիւ գերի տարեալ **Խորասան**»[44] (էջ 60ա):

ՌՆԽԹ (1449), Հայոց ՊՂԶ (1447) «Վաղճանի **Թումայ** վարդապետն **Մեծոփեցին**»[45] (60բ):

ՌՆԾԵ (1455), Հայոց ՋԲ (1453) «Սուլթան **Մահմուտն** էառ **Ըստամպօլ** յոր է **Կոստանդնուպօլիս**, ի ձեռաց **Յունաց**»[46] (60բ):

Հաջորդ՝ 61ա-61բ էջերին տեքստ չկա և միայն թվականներով սյունակներն են գծված (վերջին թվականը՝ Փրկչական ՌՈՀ (1670), Հայոց ՌՃԺԷ (1668):

Մատենադարան, ձեռ. թիվ 2965 ձեռագիրը Անեցու Ժամանակագրության հրատարակության համար Ա. Տեր Միքելյանի օգտագործած ԺԳ մատյանն է (17-րդ դ.)[47], ուր Ժամանակագրությունն ունի ավելի բաց թանաքով արված հավելումներ, որոնք որպես տարընթերցումներ տեղ չեն գտել հրատարակության մեջ: Դրանց մի մասը ներկայացնում է Հռոմի Պապերի աթոռակալության թվականները, մի մասը Հայոց կաթողիկոսների անուններին կից գրված նշում է, թե ով էր այդ ժամանակ Հայոց մարզպան կամ իշխան:

Ստորև ներկայացնում ենք հավելումներից մի քանիսը: Այն հատվածում, ուր խոսվում է Վասպուրականի Սենեքերիմ թագավորի՝ երկիրը բյուզանդացիներին տալու և Սեբաստիա տեղափոխվելու մասին[48], հավելված է. «Եւ եկն անդ Ե (5) որդովքն, որք

կենտրոնը, Ս. Էջմիածին, 1997, էջ 58:

[41] Լանկ Թեմուրը մահացել է 1405 թ.: Հավելման հեղինակն օգտվել է Թովմա Մեծոփեցուց (**Թովմա Մեծոփեցի**, Պատմագրություն, էջ 112-113):

[42] Գրիգոր Տաթևացին Մեծոփավանքում է եղել 1408-1409 թվականներին, մահացել է 1410-ին:

[43] Գրիգոր Խլաթեցին նահատակվել է 1425 թ.: **Ա. Մաթևոսյան, Ս. Մարաբյան**, նշվ. աշխ. էջ 34-36:

[44] Ժամանակի հիշատակարանների համաձայն, դեպքերը տեղի են ունեցել 1429-1430 թթ.: ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմող՝ Լ. Խաչիկյան), մասն Ա, Երևան, 1955, էջ XXV, 419:

[45] Թովմա Մեծոփեցին մահացել է 1446 թ.:

[46] Թուրքերը Կոստանդնուպոլիսը գրավել են 1453 թ. մայիսի 29-ին:

[47] Ժողովածու է՝ գրված թղթի վրա, նոտրգրով (թերթ՝ 121, 21,5x15սմ): Գրիչը դժգոհ է եղել գաղափար օրինակից, էջերից մեկում գրում է. «Օ՛շ թէ զերծանէի ի խառնեալ օրինակէս» (էջ 105ա): Փրկչական ՇԾԴ (554) թվականի դիմաց Հայոց Ա (1) թվականը դնելով ծանոթագրում է. «Յայլ օրինակս զՀայոց թուականն ի Քրիստոսի ՇԾԱ (551) ամէն էր սկսեալ» (էջ 86բ):

[48] **Անեցի**, էջ 104:

էին **Դաւիթ**, **Ատոմ**, **Կոստանդին**, **Վէստ** եւ **Ապուսահլ**» (էջ 101բ):

Նույն դեպքին անդրադառնալով՝ Վարդան Արևելցին նշում է, որ Սենեքերիմը գնաց «չորս որդուվք, որոց անունքն՝ Դաւիթ եւ Աբուսահլ, Ատոմ եւ Կոստանդին»[49]: Անունների այլ հերթականությամբ նրանց նշել է նաև Մատթեոս Ուռհայեցին՝ «...զԴաւիթ եւ զԱտոմ եւ զԱպուսահլ եւ զԿոստանդին»[50]: Ինչպես տեսնում ենք, այստեղ չկա Վեստ անունը: Այն առաջին անգամ հանդես է գալիս Անանուն Սեբաստացու (13-րդ դ.) տարեգրության մեջ[51], այնուհետև՝ ուշ շրջանի աղբյուրներում Գրիգոր Կամախեցու խմբագրած և Առաքել Դավրիժեցու օգտագործած ժամանակագրություններում[52]: Բյուզանդական տիտղոս «վեստը» կարող էր վաղ շրջանում նաև անձնանուն դառնալ, սակայն Սենեքերիմի կարծեցյալ որդին միակն է, որ հայտնի է այդ անունով: Հնարավոր է, որ նախնական բնագրում (որից ծագում են հետագա ընդօրինակությունները) նշված է եղել Կոստանդինի տիտղոսը՝ վեստ: Ցավոք հայտնի չէ, թե արդյոք նա ունեցել է այդ տիտղոսը, սակայն նկատենք, որ, ի տարբերություն իր մյուս եղբայրների, Կոստանդինը չի մնացել Սեբաստիայում, այլ գտնվել է բյուզանդական ծառայության մեջ, հավանաբար Կոստանդնուպոլսում[53]:

Հայոց ՈԼԶ (1187) թվականի դիմաց գրված է. «**Մխիթար** քահանայ **Կաթողիկեցի** թարգմանեաց զպատճառ խաւարման արեգական եւ լուսնի ի պարսկէ»[54], ապա շարունակված է. «**Սալահատին Մսրայ** սուլթանն էառ **զԵրուսաղէմ** ի Ֆռանկաց»[55] (էջ 108բ):

«ՈԾԹ (1210) **զԻւանէ** աթապէկն կալան ի **Խլաթ**»[56] (էջ 109):

«ՈԿԲ (1213) Մեռաւ **Մխիթար Գոշ** վարդապետն»[57] (էջ 109ա):

«ՉԺ (1261) Սպանաւ **Զաքարիայ**»[58] (էջ 110ա):

ՉԾԵ (1306) «**Ղորբանտայ** ղանն հրամայեաց քրիստոնէից կամ թուրքասցէն եւ կամ տացէն Ը (8) դահեկանս եւ թքանիցէն յերեսս եւ ապտակեսցէն եւ ճողեսցէն զմորուսն եւ կարկատան մի սեւ ի վերայ աջոյ ուսոյն կարեսցէն. նախատինք վասն Քրիստո-

---

[49] **Վարդան Արևելցի**, Տիեզերական պատմություն, աշխարհաբար թարգմանությունը՝ Գ. Բ. Թոսունյանի, Երևան, 2001, էջ 97:

[50] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն (աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Հ. Բարթիկյանի), Երևան, 1991, էջ 62:

[51] Մանր Ժամանակագրություններ, հ. 2, էջ 131:

[52] Մանր Ժամանակագրություններ, հ. 2, էջ 262, **Առաքել Դաւրիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 467:

[53] **Վ. Վարդանյան**, Արծրունիները Հայոց պատմության մեջ, Երևան, 2002, էջ 171:

[54] Այս թվականն են նշում նաև այլ աղբյուրներ: Տե՛ս **Մխիթար Անեցի**, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Գ. Մարգարյանի, Երևան, 1983, էջ 7-8:

[55] Հմմտ.՝ **Անեցի**, էջ 142:

[56] Հմմտ.՝ Անեցի, էջ 147:

[57] Թվագրումն ստույգ է:

[58] Շահնշահ Ա-ի որդու սպանության թվագրությունը ճիշտ է: Հմմտ.՝ Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 43, 149:

սի»[59] (էջ 111բ-112ա):

Մատենադարան, ձեռ. թիվ 481, Ա. Տեր-Միքելյանին ծանոթ ԺԴ օրինակն է[60]: Բուն գրչի շարադրանքը հասնում է մինչև 62ա էջը և ավարտվում Հայոց ՉՁԴ (1335) թվականով, 62բ-66ա էջերին միայն թվականներով սյունակներն են գծված, իսկ 66բ-68ա էջերին կան հետագայի հավելումներ:

«ՌԻԶ (1577) թվին գէսաւոր աստղ ելաւ յարեւմուտս ծարն յարեւելք, մեծ եւ երկայն եւ բազում աւուրք երեւէր յարեւմտի ցժամանակն մինչեւ Բ (2) Գ (3) ժամ գիշերուն» (էջ 66բ): Այս երևույթի մասին որոշ տարընթերցումներով (առանց գիշերային ժամերի հիշատակության) վկայություն է պահպանվել նաև այլ ժամանակագրություններում[61]:

Հավելումների վերջին նշումը Հայոց ՌՃԻԵ (1676) թվականի դիմաց. «Ի սոյն ամի **Շահնաւազ** խանն **Վրաց** ելեալ Ռ (1000) արամբք մեծամեծօք և բազմաւ ընծայիւք ի տեսութիւն շահ **Սուլէմանին** եւ հասեալ ի **Խուշկառու** հիւանդացաւ եւ յետ տասանց աւուրց հիւանդութեան իւրում մեռաւ, սեպտեմբեր ԻԷ (27) սուրբ Գէորգայ պաս չորեքշաբթին ի մուտս արեւու, իսկ զօրք, որք ընդ նմայ, մինչ ի դեկտեմբեր քսան եւ հինգն դեռեւս ի **յԱսպահան** են» (էջ 68ա):

Մահմեդականություն և Շահնավազ (Շահ Նավազ) անունն ընդունած Վրաց Վախթանգ 5-րդ թագավորի մահվան մասին հայտնում է նաև Զաքարիա Ագուլեցին, այլ մանրամասներով[62]: Ամսաթվի և մահվան հանգամանքների առումով ներկա տեղեկությունն ավելի հանգամանալից է: Միաժամանակ հիշատակության վերջին բառերից կարելի է ենթադրել, որ այն հենց այդ ժամանակ, այսինքն 1676 թ. դեկտեմբերի վերջին է գրվել:

---

[59] Հմմտ.՝ Գրիգոր Վարագեցու Ժամանակագրությունը (Մանր ժամանակագրություններ, հ.2, էջ 381):

[60] Այս մատյանը Ա. Տեր-Միքելյանի ձեռքն է անցել Անեցու Ժամանակագրությունը հրատարակության պատրաստելուց հետո: Գրքի առաջաբանում նա գրում է. «Նորերս ձեռքս ընկաւ եւ մի օրինակ N 484... Սա հասնում է մինչեւ 1339 թիւը, սակայն խիստ խառն է եւ պակասաւոր» (Անեցի, էջ ԻԳ):

[61] Մանր ժամանակագրություններ, հ 1, էջ 172, հ. 2, էջ 355:

[62] Մանր ժամանակագրություններ, հ 1, էջ 290: